Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

«16» հունվարի 2019թ

ք. Կապան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Արմեն Զաքարյանս ուսումնասիրելով «26» հունիսի 2018թ-ին վերսկսված թիվ 02983768 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՄԴ/0111/03/16 կատարողական թերթի համաձայն պետք է Նարեկ Կարապետյանից հօգուտ ,,Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ,, ՓԲԸ-ի բռնագանձել 474296 ՀՀ դրամ:

Կատարողական գործողությունների ընթացքում Սյունիքի մարզի Դովրուս /Տավրուս/ գյուղում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի գնահատման համար նշանակվել էր ապրանքագիտական փորձաքննություն, որի արժեքը ըստ ապրանքագիտական փորձաքննության եզրակացության կազմել է 2755000ՀՀ դրամ:

Կատարողական թերթերի պահանջները կատարելու նպատակով անհրաժեշտ է վերոհիշյալ գույքը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ իրացման նպատակով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով « Դատական Ակտերի Հարկադիր Կատարման մասին » ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և « Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Նարեկ Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքը

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1	Սյունիքի մարզի Դովրուս /Տավրուս/ գյուղում գտնվող 114.8քմ մակերեսով 1 հարկանի կիսաքարուղային հարկով 4 սենյականոց բնակելի տուն, որը տեղակայված է 0.22հա մակերեսով հողատարածքի վրա: Արտաքին պատերը կոպտատաշ բազալտ քար, տանիքը ազբոշիֆեր: Մուտքի դուռը, ներքին դռները, պատուհանները և հատակը փայտյա: Պատերը ներկանյութվ հարդարված, հին վերանորոգում: Ջուգարանը դրսում:	2755000 ՀՀ դրամ	2066250ՀՀ դրամ	1

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝harkadir.ajurd.am միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝

«06» մարտի 2019թ:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում;

«Դատական Ակտերի Հարկադիր Կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխանտանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ավագ հարկադիր կատարող՝ Ա. Զաքարյան
ազգանուն

ստորագրություն